# ԲԱՑՈՒԱԾ Է

# ԲԱԶՄԱՎԷՊԻ

## 1900 ՏԱՐՒՈՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է ՖՐ. 10 = ՐՈՒՊԼԻ 4 = ՏՈԼԼԱՐ 2

## ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

ԲԱԶՄԱՎԷՊ *իր յարգելի բաժանորդներէն այս տարուան մէջ շատ համակրանք տեսնելով, և զգալի կերպով առաւելլով բաժանորդաց թիւն, առաջիկայ տարւոյս իր պրակները դեռ աւելի ճոխ պարունակութիւն մը պիտի ունենան, հետեւեալ ուղղութեամբ։*

ԲԱԶՄԱՎԷՊը *պիտի ունենայ գլխաւոր յատուկ բաժիններ, որոնք առանձին գլխակարգութիւն մը պիտի ունենան։*

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԲԱԶՄԱՎԷՊ *իր առաջին* ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ *գլխակարգութեան մէջ պիտի պարունակէ Նախնեաց հին գրութեան վերաբերեալ Ուսումնասիրութիւնք, Աստուածաբանութիւնք, Մատենագրութիւնք, Զուգակշռութիւնք, Կենսագրական, Հնախօսական, Աշխարհագրական և Ծիսական յօդուածներ։*

## ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱԶՄԱՎԷՊ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ *վերնագրով ներկայ դարու ազգային գրական անձանց վրայ պիտի զբաղի, համառօտ կենսագրականով պիտի ուսումնասիրէ իրենց բանասիրական, բանաստեղծական, վիպասանական, պատմական գրականութիւնը, հրատարակելով նոյն իսկ անոնցմէ անուանիներուն կենդանագիր պատկերն։ Միեւնոյն վերնագրի տակ պիտի զետեղուին նաեւ «Գրախօսական» յօդուածներ, այսինքն ուսումնասիրութիւնք Բազմավէպի նուիրուած նոր հրատարակութեանց վրայ. ըստ գրքին ծաւալին երկար կամ համառօտ կ'ըլլայ գրախօսութիւնը, իսկ եթէ երկը փոքրիկ տետրակ մ'է, թարգմանութիւն և ոչ երկասիրութիւն և ոչ այնքան շատ կարեւոր ու օգտաշատ երկ մը և կամ ազգային խնդրոյ նիւթ մը, միայն յայտարարութիւնը երեք անգամ պիտի գրուի Բազմավէպի կողքին վրայ։*

*Այս միեւնոյն գլխակարգութեան տակ պիտի զետեղուին «Հանդէս Հանդիսից» վերնագրով Արտասահմանի, Թրքահայ և Ռուսահայ հանդէսներու և օրագիրներու պարունակած շահեկան յօդուածներուն վրայ հետաքրքրական ուսումնասիրութիւններ։ Նաեւ երբեմն երբեմն*

digitised by A.R.A.R.@

Հ. Ս. ԷՓՐԻԿԵԱՆ

# ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

# ԲՆԱՇԽԱՐՀԻԿ

# ԲԱՌԱՐԱՆ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ



ՎԵՆԵՏԻԿ – Ս. ՂԱԶԱՐ

1900

digitised by A.R.A.R.@

# ԱԶԴ

Ո՜րչափ տխուր, ո՜րչափ և ողբալի մեր բնաշխարհի ներկայ վիճակը, այնքան սիրելի, այնքան և ցանկալի իւր տարակաց որդեկաց համար իրենց Հարց և Նախնեաց անմահ յիշատակներն, զորս՝ ներկայ Բառագրոյս մէջ փափաքեցանք և ջանացինք ի մի ամփոփել։ Արդ այս ԲՆԱՇԽԱՐՀԻԿ, կամ լաւ ևս մեր երկրի ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ մէջ կը նկարագրուին.

Ա. — Մեր բոլոր նահանգները, գաւառները, քաղաքները, աւանները, գիւղերը, լեռները, դաշտերը, գետերը, լճերը, վանքերը և այլ նշանաւոր և յիշատակաց արժանաւոր տեղուանք։ — Բ. - Յատուկ խնամքով ազգային աշխարհագրական պատմութիւնն, ինչպէս նաև հնախօսութիւնն, իրենց բաժինն ունին գործոյս մէջ, և իւրաքանչիւր նահանգաց, գաւառաց և քաղաքաց բերոց վրայ լիովին տեղեկութիւնք կը տրուին։ — Գ. — Մեր գաղթավայրերն ևս կը մտնեն Բառագրոյս մէջ, և ըստ կարելւոյն երկրագնդոյս վրայ գտնուող այն ամէն քաղաքներն՝ յորս բնակած և յիշատակ մը թողած է հայութիւնն, և կամ տակաւին կը բնակի։ — Դ. - Զանազան ձեռագրաց և շինուածոց յիշատակարանաց մէջ յիշուած աշխարհագրական անուններէն այն ամէնը՝ որ կրնան հետաքրքրական ըլլալ՝ կը ջանանք դուրս չթողուլ։ — Ե. — Կը յիշատակենք նաև այն ամէն այլազգաբնակ գիւղերն, յորս կը գտնուին ինչ ինչ յիշատակարանք և բեկորք հայրենի հնութեանց։ — Զ. — Նշանաւոր անուանց շատերու ստուգաբանութիւնն ալ յառաջ կը բերենք, և ոմանց դիմաց ըստ տեղւոյն կը նշանակենք օտար ազգաց անուանակոչութիւնն՝ իրենց յատուկ գրերով (Ա. ասորերէն, Ար. արաբերէն, Գղ. գաղղիերէն, Ե. եբրայեցերէն, Թ. թուրքերէն, Իտ. իտալերէն, Լ. լատիներէն, Պ. պարսկերէն, Ռ. ռուսերէն, Վ. վրացերէն)։ Է. — Այն անուններն, որոց վրայ աւելի ընդարձակօրէն գրած են ուրիշ ազգային և օտարազգի հեղինակներ, և կամ տուած են օգտակար և հետաքրքրական տեղեկութիւններ, առանձին գրքերու կամ թերթերու մէջ, ի ստորև կը նշանակենք համառօտագրութեամբ նոյն գիրքն կամ թերթն և գլուխն կամ էջն։

Գործս ըստ կարելւոյն ընտիր և գոհացուցիչ ընելու համար, գործածած ենք անթիւ ազգային և օտարազգի աղբիւրներ, յորոց ոմանց մէջէն երբեմն տողերով քաղեր ենք։ Այդ ազգային աղբիւրներու մեծագոյն մասին ցուցակն կը դնենք աստ.


Ալիշան Հ. Ղեւոնդ Վ. — Քաղաքական աշխարհագրութիւն (Քղ. աշխ.) 1853, Վենետիկ Ս. Ղազար։ Պատկերացոյց Նոր Հայաստան (Պատկ. Ն. Հայ.). 1855. Վենետիկ Ս. Ղ։ — Սիսուան. 1885. Վենետիկ Ս. Ղ։ — Շիրակ. 1881, Վենետիկ Ս. Ղ։ — Այրարատ. 1890, Վենետիկ Ս. Ղ։ — Սիսական. 1893, Վենետիկ Ս. Ղ։ — Երկհատոր աշխարհագրական անուանց ցանկ. ձեռագիր։ — Տեղագրութիւնք Ծոփք, Բարձր Հայք, Խաղտիք, Տայք, Գուգարք, Ուտի, Արցախ և Աղուանք աշխարհաց. ձեռագիր։

Բարունակ Պէյ Ֆերուխեան. — Ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան (Ճնպրհ. Բաբ.). 1876, յԱրմաշ։

Բարխուտարեանց Մակար Եպիս. — Աղուանից երկիր և դրացիք. 1893, Թիֆլիս։ — Արցախ. 1895, Բագու։

Բժշկեան Հ. Մինաս Վ. — Պատմութիւն Պոնտոսի. 1819, Վենետիկ Ս. Ղազար։ — Ճանապարհորդութիւն ի Լեհաստան (Ճնպրհ. Լեհաստ.). 1830, Վենետիկ Ս. Ղազար։

Գեղամեանց Յ. — Ճանապարհորդութիւն Ախալցխայէն մինչև Անի. 1879, Փորձ հանդէսի մէջ։

Թաղիադեանց Մ. — Ճանապարհորդութիւն ի Հայս. 1847, Կալկաթա։

Ինճիճեան Հ. Ղուկաս Վ. — Հնախօսութիւն Հայաստանի 3 հատոր (Հնախ. Հայս.). 1835, Վենետիկ Ս. Ղազար։ — Ստորագրութիւն հին Հայաստանի (Ստր. Հայս.). 1822, Վենետիկ Ս. Ղ։ — Նոր Հայաստան (Ն. Հայս.). 1806, Վենետիկ Ս. Ղ։

Լալայեան Ե. — Ջաւախք. 1897, Թիֆլիս։ — Վարանդա. 1898, Թիֆլիս։ — Սիսիան. 1898, Թիֆլիս։ — Զանգեզուր. 1899, Թիֆլիս։

Կաւճօղլեցի Պետրոս Ծ. Վ. — Ասիական ճանապարհորդութիւն ի հայրենիս (Ասիական ճնպրհ.). 1881, Կ. Պոլիս։

Կարբեճեանց Յակոբ Վարդապետ. — Ճանապարհորդութիւն. 1862, ի Կռունկն Հայոց աշխարհի։

Հայկունի Ս. — Բագրեւանդ Ջրբաշխ գաւառ (Բագրեւանդ). 1884. յԷջմիածին։

Ղազանճեան Կիրակոս Վ. — Խառն նամակներ. 1887. Կ. Պոլիս։

Ճանիկեան Յ. Կ. — Հնութիւնք Ակնայ. 1895. Թիֆլիս։

Միրախորեան Մանուէլ Կ. — Նկարագրական ուղեւորութիւն ի Հայաբնակ գաւառս Ասիական Տաճկաստանի (Նկարագրական ուղեւորութիւն). 1884–5. Կ. Պոլիս։

Մխիթարեանց Աբել Վ. — Ճանապարհորդութիւն յԱնի. 1865. Կ. Պոլիս։ — Վաղարշապատ. 1874, Էջմիածին։ — Տրապիզոնի գաղթականութիւն. 1857,


digitised by A.R.A.R.@

Կ. Պոլիս: — Պատմութիւն Մեծատանին Հայրենոյ. 1836, Տփղիս: Պատ. Հոռոմոսի Վանաց. 1870, Էջմիածին:

Նաթանեան Պօղոս Ծ. Վ. — Արտօսր Հայաստանի. Կ. Պոլիս: — Ճանապարհորդութիւն ի Դիարբէք. 1861, ի Կառնեկն Հայոց Աշխարհի: — Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Սեբաստիոյ (Տեղ. Սեբաստ.). 1877, Կ. Պոլիս: — Տեղեկագրութիւն Սիվրիհիսարու. 1872, Կ. Պոլիս: — Տեղեկագրութիւն վիճակին Նիկոմիդիոյ. 1874, Կ. Պոլիս: — Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Գաղատիոյ. 1875, Կ. Պոլիս:

Շահխաթունեանց Յովհ. Եպիս. — Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ Ա և Բ հատոր. 1842, յԷջմիածին:

Շէրմազանեան Գ. Վարդանեանց. — Ճանապարհորդութիւն Հայաստանում. 1865, Կառնէկ:

Չամչեան Հ. Միքայէլ Վ. — Պատմութիւն Հայոց հատոր. 1784, 1785, 1786, Վենետիկ:

Ջալալեանց Սարգիս Արքեպիսկոպոս. — Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան Ա և Բ հատոր. 1842, 1858, Տփղիս:

Րաֆֆի. — Ճանապարհորդութիւն Թիֆլիզից մինչև Ազուլիս. 1878, Փորձ: — Ասոր միջատանական ընտիր գրութիւնները եւս ունինք մեր առջեւ:

Սարգիսեան Հ. Ներսէս Վ. — Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս (Տեղագր. Հայս.). 1864, Վենետիկ Ս. Ղազար:

Սեդրակեան Արիստակէս Արքեպիսկոպոս. — Հնութիւնք հայրենեաց ի գաւառն Երնջակու. 1872, Վաղարշապատ:

Սմբատեանց Մեսրովբ Արքեպիսկոպոս. — Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի (Գեղարքունի). 1895, Էջմիածին: — Նկարագիր վանորէից, քաղաքաց և գիւղօրէից Շամախւոյ թեմի (Շամախւոյ թեմ). 1896, Տփղիս: — Ստորագրութիւն հին քաղաքացն Ցօլակերտի, Երուանդակերտի, Երուանդաշատայ և Բագարանի. 1870, Էջմիածին:

Սրուանձտեանց Գարեգին Եպիս. — Գրոց և Բրոց. 1874, Կ. Պոլիս: — Մանանայ. 1876, Կ. Պոլիս: — Թորոս Աղբար. հատ. Ա և Բ. 1879, 1883, Կ. Պոլիս: — Համով-Հոտով. 1884 Կ. Պոլիս:

Վաղարշակերտցի Յովհաննէս Քահանայ. — Ճանապարհորդութիւն ի սահմանս Բարձր Հայոց. 1870, Կ. Պոլիս:

Տէր Աւետիքեան Ն. — Տեղագրական նամականի. 1889 Տփղիս:

Փիրղամալեանց Ղեւոնդ Վ. — Ճանապարհորդութիւն ի Մայր Աթոռն Արարատեան և անտի ի Կ. Պոլիս. 1871, Կ. Պոլիս: — Ճանապարհորդութիւն Վանայ մինչև Կ. Պոլիս. 1872, Թիֆլիս:

Քաջբերունի. — Ճանապարհորդական նկատողութիւնք. Փորձի և Արարատ ամսագրի մէջ:

Քուշնեան Հ. Յակոբ Վ. — Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, Ա և Բ հատոր. 1899, Վիեննա:

Ազգային պարբերական թերթերէն յիշենք Բազմավէպ, Արարատ, Հանդէս Ամսօրեայ, Ազգագրական Հանդէս, Արաքս, Արեւելեան Մամուլ, և այլն:

Օրաթերթերէն. Մասիս, Մշակ, Նոր Դար, Արեւելք, Արձագանգ, Բիւզանդիոն, Արմէնիա, և այլն:

Պատմիչներէն. Ագաթանգեղոս, Անեցի, Ասողիկ, Թ. Արծրունի, Բուզանդ, Եղիշէ, Զենոբ Գլակ, Լաստիվերտցի, Խորենացի, Կաղանկատուացի, Կիրակոս, Հեթում, Ղազար, Ղեւոնդ, Յովհան կաթողիկոս, Ուռհայեցի, Սամուէլ, Վարդան, Օրբէլեան, և այլն:

*Իսկ օտարազգի բազմաթիւ աղբիւրներէ, տեղւոյ սղութեան պատճառաւ կ'ստիպուինք դնել միայն հետեւեալները.*


*Brosset M.* — Ruines d'Ani. 2 vol. 1860–1, St. Pétersbourg. — Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie. 1851, St. Pétersbourg.

*Deyrole Théophile.* — Voyage dans le Lasistan et l'Arménie. 1870, Tour du Monde, vol. XXIX, Paris.

*Dubois De Monpéreux.* — Voyage autour du Caucase. 6 vol. 1939–43, Paris.

*Élisée Reclus.* — Géographie Universelle, l'Asie Antérieure, l'Asie Russe. 1884, Paris.

*Hamilton J. William.* — Researches in Asia Minor. 2 vol. 1842, London.

*Saint-Martin M. J.* — Mémoires historiques et géographiques sur l'Arménie. 2 T. 1818, Paris.

*Tavernier J. B.* — Les six voyages en Turquie, en Perse, &. 3 Tomes. 1616, Paris.

*Texier Charles.* — Description de l'Asie-Mineure. 3 Tomes. 1839–49, Paris. — L'Arménie, la Perse et la Mésopotamie. 1840–52, Paris.

*Tournefort (Pitton De)* — Relation d'un voyage du Levant, &. 1717, Lyon.

*Tschihatscheff Pierre.* — Asie-Mineure. 4 vol. 1853–60, Paris.

*Vital Guinet.* — La Turquie d'Asie. 4 Tomes. 1892–94, Paris.

*Vivien de Saint-Martin.* — Nouveau Dictionnaire de Géographie Universelle. 7 Tomes, Supplément, 1879–1899.., Paris.


Համառօտիւ յիշենք նաեւ աշխարհագրական գրուածքներ՝ հրատարակողներէն գէթ Ալիխ, Վակնէր, Տէվիս, Վիլըն, Քոխ, Շարտէն, Շանթր, Ճեմէլլի, Վինչ, Քիփերթ, և այլն:

Վիճակագրական մասին համար փափաքելով ճշգրտոյն թիւեր նշանակել, Ռուսահայաստանի հայաբնակ քաղաքաց և գիւղից մարդահամարը կը քաղենք նոյն տէրութեան վիճակագրութեան գրոց վերջին տպագրութիւններէն. Նոյնպէս կը փափաքէինք ընել Թրքահայաստանի վիճակագրութիւնը. սակայն անճիշդ ըլլալով՝ կը գործածենք առ ժամս Վ. Քինէ գաղղիացւոյ նշանակած թիւերը, բայց սա ալ անվստահանալի ըլլալէն զատ, մանրամասն ալ չէ: Թէեւ ունինք նաեւ Ազգային Պատրիարքարանէ յատուկ խնամքով պատրաստուած վիճակագրութիւն մը, բայց 20 տարիէն աւելի հնութիւն ունի:

Ինչպէս պիտի տեսնէ ընթերցողն այս առաջին պրակէն, ջանացած ենք ճոխութեամբ զարդարել Բառագիրքս, նշանաւոր քաղաքաց, վանքերու և այլ կարեւորագոյն վայրերու և տեսարանաց գեղեցկատիպ պատկերներով և նոյն ոճը յաջորդաբար պիտի շարունակուի:

digitised by A.R.A.R.@

Եթէ մեր ջանից և փափաքանաց և հասարակաց զգացման համապատասխան երկ մը վկայուի առաջիկայ ծանր աշխատութիւնս ի Բանասիրաց՝ մենք զմեզ երջանիկ պիտի համարինք, մանաւանդ որ մեր սիրտն արդէն կը վկայէ՝ թէ մեր աշխարհի դէթ նշխարեալ աւերակներն և յիշատակներն Բառագրոյս մէջ կենդանութիւն առնլով պիտի յաւերժանան սերնդոց ի սերունդս։

Ի վերջոյ կը փութանք հրապարակաւ մեր շնորհակալութիւնքն յայտնելու առ այն ամենայն ազնուասիրտ ազգայինս, որոնք գործոյս տպագրութեան սկսելուն պէս, փութացին խրախուսել զմեզ իրենց քաջալեր նամակներով և չզլացան ու չեն զլանար նաև կարևոր տեղեկութիւններ տալ զանազան տեղեաց նկատմամբ։ Այսպիսի ծանր աշխատութեան մը ըստ կարելւոյն կատարեալ ըլլալուն փափաքողաց բարեյօժար կամաց կը դիմենք դարձեալ խնդրելով որ հաճին տեղեկութիւններ տալ մեզ, գլխաւորաբար ցարդ չանդրադրուած քաղաքաց և գիւղից և մանաւանդ անծանօթ գաղթավայրերու վրայ։ Որոց ևս մեր կանխիկ շնորհակալութիւնքն։

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆՆ կը հրատարակուի 20ական թերթերէ ձևացած պրակներով։ Իւրաքանչիւր պրակ կ'արժէ զուտ 2,50 ֆրանկ, 1 ռուբլի, 50 սէնթ։

# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

# ԳՐՊԱՆԻ ԱՏԼԱՍ

Կը պատրաստուի և 1900 տարւոյ մէջ առաջին անգամ լոյս պիտի տեսնէ մեր մամուլէն հայերէն **ԳՐՊԱՆԻ ԱՏԼԱՍ** մը, որոյ վրայ քանի մը բարեկամաց խնդրանաց համեմատ, կը փութանք տալու կարևոր տեղեկութիւնք։ **ԳՐՊԱՆԻ ԱՏԼԱՍԸ** կը պարունակէ ընտիր թղթի վրայ գունաւոր, վիմատիպ հետևեալ աշխարհացոյց տախտակները. Աշխարհագունդ մակարդակ, Եւրոպա, Բրիտանական կղզիք, Շուէտ-Նորվեկիա-Տանիմարքա, Պելճիա-Հոլանտա, Ռուսիա, Գաղղիա-Զուիցերի, Գերմանիա, Աւստրիա-Հունգարիա, Սպանիա-Փորթուկալ, Իտալիա, Պալքանեան թերակղզի, Թուրքիա-Ռումանիա-Յունաստան-Սերպիա-Պուլղարիա-Մոնթէնեկրոյ, Ափրիկէ, Ասիա, Փոքր Ասիա-Կովկաս, Ամերիկա հարաւային, Ամերիկա հիւսիսային, Ովկիանիա։




Իւրաքանչիւր աշխարհի կամ տէրութեան քարտէս ունի իրեն յատուկ գոյները, ամէն տախտակի վրայ կան չորսէն մինչև վեց տեսակ գոյն։ Յատուկ խնամքով նշանակուած են շոգենաւուց կատարած գլխաւոր ընթացքները, ինչպէս նաև երկաթուղեաց գծերը։

Ատլասիկս աշխարհացոյց տախտակներէ զատ ունի նաև առանձին տախտակ մը՝ զանազան տէրութեանց գոյնզգոյն դրօշներու, և ի վերջոյ այլ և այլ քաղաքաց և տեսարանաց գեղեցկատիպ պատկերաց հաւաքածոյ մը։

Կը բովանդակէ տեսակ տեսակ կարևոր ծանօթութիւններ նկատմամբ իւրաքանչիւր աշխարհի բնակչաց, տարածութեան, գետոց, լերանց բարձրութեան, ծովուց խորութեան, բերոց, ճարտարարուեստից, վաճառականութեան, վարչութեանց, իւրաքանչիւր տէրութեան ելևմտից, չափուց, կշռոց, դրամոց, երկաթուղեաց, հեռագրաց, ցամաքային կամ ծովային զօրութեանց և այլն, և այլն։

Ունի նաև բոլոր աշխարհացոյց տախտակաց մէջ գտնուած անուանց ընդհանուր ցանկն հայերէն և եւրոպական. և ո՛ և է անուան կամ քաղաքի մը դիրքը և տեղը դիւրաւ գտնելու համար՝ դիմացը կը նշանակուի թէ ո՛ր տախտակի և ի՛նչ աստիճանաց մէջ կը գտնուի։

Այս փոքր բայց կարևոր աշխատութիւնն ըստ կարելւոյն կատարեալ և ընտիր ընելու համար, մեր դիմաց ունեցած ենք նոյն տեսակ եւրոպական հրատարակութեանց գրեթէ ամէն տեսակներն և գլխաւորաբար հետևած ենք Justus Perthes'ի և F. Schrader'ի գրպանի ատլասներու ամենանոր տպագրութեանց։

Կը յուսանք թէ Ատլասիկս իւր այս ամենայն պարունակութեամբք պիտի կարենայ օգտակար ըլլալ ոչ միայն դպրոցական ուսանողաց, այլ և ոչ սակաւ չափահասից համար առձեռն յիշատակարան մը՝ զանազան պարագայից մէջ։

**ԳՐՊԱՆԻ ԱՏԼԱՍԻ** տպագրութիւնն աւարտելէ վերջ, պիտի հանուի ի վաճառ յատուկ լաթակազմով և ճակատի զարդով, ինչպէս կը տեսնուի աստ դրուած փոքրադիր պատկերի մէջ։

digitised by A.R.A.R.@

«Ազգային Արձագանգ» վերնագրով ներկայ ամսուց մէջ պատահած ազգային որ և իցէ կա-րեւոր լուրերն պիտի հաղորդուին համառօտ տողերով և փոքրիկ դիտողութեամբ։

Ի վերջոյ պիտի հրատարակէ նաեւ օտար մամլոյ մէջ եղած ազգային պատմութեան և գրութեան վերաբերեալ յօդուածոց տեղեկութիւնք։

## ՆՈՐ-ԿԵԱՆՔ

ԲԱԶՄԱՎԷՊ «ՆՈՐ ԿԵԱՆՔ» գլխակարգութեան տակ «Եւրոպական մամուլ» վեր-նագրով, «Հանդէս Հանդիսից»ի նման տեղեկութիւններ պիտի տայ հանրազգային հանդիսից վրայ։ Եւրոպական դասական բանաստեղծութիւնները շահեկան ծանօթութիւններով աշ-խարհաբար պիտի թարգմանուին։ «Գիտականք» վերնագրով նորանոր գիւտերու և գիտա-կան իմաստասիրութեանց վրայ յօդուածներ պիտի գտնուին։ Նոյն գլխակարգութիւնն «Մեռելագրութիւն» վերնագրով պիտի ունենայ նոյն ամսուան մէջ ընդհանուր ազգաց նշա-նաւոր անձերու մահագրը։ Իսկ «Քրոնիկ» վերնագրով հանրազգային քաղաքական օրուան հետաքրքրական լուրերն պիտի պարունակէ։ Երբեմն երբեմն եւրոպական գրականութեան և քաղաքականութեան վրայ լուրջ յօդուածներ պիտի հրատարակուին։

ԲԱԶՄԱՎԷՊի կողքին վրայ պիտի հրատարակուի նաեւ թրքահայ և ռուսահայ լրագիրներու ու հանդէսներու յօդուածոց քաղուածոյ ցանկը։

## ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

ԲԱԶՄԱՎԷՊի յօդուածները կը գրուին Վենետկոյ Մխիթարեան միաբաններէն. որոց կ'աշխատակցին նաեւ Խալաթեանց, Պատմաճեան, Աճառեան, և այլք։ Առանցմէ զատ եթէ Բազմավէպի ուրիշ բանասէրներ եւս փափաքին աշխատակցելու, և եթէ մեր ուղղութեան համեմատ շահեկան յօդուածներ խաւրեն կ'ընդունուի յօդուածնին. իսկ եթէ յօդուածներն խմբագրութիւնս հրատարակելու անյարմար գտնէ, բնագիրներն ետ չեն դարձուիր։

ԲԱԶՄԱՎԷՊի խմբագրութիւնը իւր յարգելի աշխատակցաց կը յայտարարէ, թէ նոր տարիէն կամ վարէն սկսեալ յօդուածներն գրուին ոչ շատ գրաբարանակ և ոչ ռամիկ լեզուով. այլ միջին աշխարհաբարով, և եթէ իւր փափաքած լեզուին հակառակ ուղղու-թեամբ գրուին, խմբագրութիւնը ազատ է սրբագրելու։

ԲԱԶՄԱՎԷՊը «Հանդէս Հանդիսից» բաժնին մէջ պիտի պատասխանէ այն ամէն քննադատութեանց որ կը կատարուին Մխիթարեան մամլոյ վրայ լուրջ ուսումնասիրու-թեամբ. և եթէ պատասխանի անգոր պատասխան տրուի ՊԻՏԻ ԼՌԷ, ու երկրորդ անգամ եւս պատասխան պիտի չի տայ։ Դարձեալ նոյն իսկ առաջին պատասխան պիտի չի տայ այլ ՊԻՏԻ ԼՌԷ եթէ քննադատութիւնք ըլլան երախայական գաղափարով, մեքենական հա-կակրութեամբ, անտաշ գրութեամբ, կրօնական հակակիր խորութեամբ, կուսակցական ոգւով։ Վերջապէս եթէ քննադատութիւնը զուրկ է լրջութենէ,

ԲԱԶՄԱՎԷՊը ՊԻՏԻ ԼՌԷ և կամ իւր կանխիկ պատասխանն պիտի ըլլայ *AQUILA NON CAPIT MUSCAS.*

---

– ԲԱԶՄԱՎԷՊի բաժանորդ գրուողք, կրնան դիմել ուղղակի մեր խմբագրութեան։ Հասցէն՝ Rédaction de la Revue “*Pazmaveb*„ VENISE (italie) S.t Lazare:

Մեր յարգելի բաժանորդներէն և խմբագրութեանս հետ հաղորդակցութիւն ունեցող-ներէն կը խնդրուի որ Բազմավէպի վերաբերեալ Գիրք, Նամակ և Դրամ ուղղակի մեր վերոյիշեալ Բազմավէպի հասցէով խաւրուի, և ոչ տպարանի կամ ուրիշ անհատական անձանց հասցէով։

digitised by A.R.A.R.@

# ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի ի սէր Հայ որբիկներու որ մեր լրագրապետները բարեհաճին մի քանի անգամ տպել այս յայտարարութիւնը իրենց թերթին մէջ, փոխարէն կը գտնեն իրենց թերթին ծանուցումը սոյն բացառիկ թերթին մէջ։

Ի նպաստ **ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ** ԲԱԶՄԱՎԷՊ բացառիկ պրակ մը կը հրատարակէ։ Թերթին երկայնութիւնն է 42 հարիւրորդամետր, լայնք 30 հրդմ.։ Թերթը կը բաղկանայ 40 էջերէ, և ամէն էջ երեք լայն սիւնակներու բաժնուած է։ Թուղթը հաստ, ողորկ, փայլուն ու շատ ընտիր։ Կը պարունակէ ժողովրդական ուշագրաւ, հետաքրքրական և օգտակար յօդուածներ։

ԲԱԶՄԱՎԷՊի այս բացառիկ լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իբրեւ անդրանիկ «ՀԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹԵՐԹ» մը Illustration Arménienne, նման Եւրոպական մեծ ազգաց շաբաթական պատկերազարդ թերթերու։

Կը տպուի մի քանի հազար և ատակը պիտի յատկացուի հայ որբանոցներուն։

Գինն է **ԿԱՆԽԻԿ** 2,50 ֆր. 1 րբ. 50 սէնթ.

Այս ծանուցագրով կը հրաւիրենք մերազնեայ այն ամէն ազնիւ ու գթած անձնաւորութիւնները որ բաժանորդագրուելով այս բացառիկ պրակին, համեստ լուման մը բարեհաճին ձգելու հայ որբիկներու գանձանակին մէջ։

Բաժանորդագրաց անունն, և ով որ այս նպատակաւ որբիկներուն օգնութեան պիտի հասնի, հաւաքուած գումարը և որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի տպուին ԲԱԶՄԱՎԷՊի պրակներուն մէջ։

Այս բացառիկ թերթին մէջ կը տպուին նաեւ ծանուցումներ, մէկ տողի գինն է 25 սանդիմ. փափագողք փութան յղել իրենց ծանուցումները։

Մեր հասցէն է՝

Rédaction de la Revue "*PAZMAVEB*„

(S.t Lazare) **VENISE** (ITALIE)

---

## ԲԱՑԱՌԻԿ ԹԻՒ

# ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ

### ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խնդրեմ, ընդունեցէք ի նպաստ հայ որբանոցներու (    ) ֆրանք (    ) րուբլի, (    ) տոլար, և հաճեցէք ուղարկել ինձ «ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ Բացառիկ պրակէն» օրինակ (    ) հետեւեալ հասցէով՝

Գրել որոշ:
- Տէրութիւն, Նահանգ ..............
- Քաղաք, փողոց, տուն ..............
- Անուն ..............
- Մականուն ..............

Ստորագրութիւն բաժանորդի ..............

digitised by A.R.A.R.@